

# ԿՈՐԾԱՆՈՒԱԾԸ

## ԴՐԱՄԱ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂ. ՇԻՐԱԱՆԶԱԴԻՔԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՉԻՆ Ք

ՍԵՆԵԹԵՐԻՄ ԱԱՀԱՌՈՒԽԻՆԻ .	34	տարեկան :
ԿԱՏԱՐԻՆԻ . Նրա կինը ,	46	"
ԱՐՑԱՇԵՄ . Նրանց որդին ,	26	"
ԱՆԱՀԻՏ . Նրանց դուռարքը ,	24	"
ԱԼՔԻՑԱՆԴՐ ԱԼՎԱՆԴԵԱՆ .	39	"
ՖԼՈՐԱ . Նրա աղջիկը :	21	"
ՏԻԳՐԱՆ . Արտաշեսի մատերիմ ընկերը .	27	տարեկան ,
ՀՐԱԱՆ . Արտաշեսի ընկերը ,	24	տարեկան :
ՆՈՅԻՄ ՀԱՄԲ . որի խականին անունն է Անտոնինա Ազգաբրցօվա .	23	ա-
ԱՐՄԱԶ ԱՐՄՁԵԼԻՆ . Արտաշեսի նախկին ընկերը :	28	տարեկան :
ՆԱԶԱՆԻՆ . Սահառունիների վաղեմի խոնարարուհին .	48	"
ԴԱՆԻԵԼ . Ալվանդեանների ծառան :		
ՍՕՖԻՄ . "		աղախինը ,
Մի ոստիկանական պաշտօնեայ :		

Գործողութիւնը կատարուամ է Կոլիսակի մեծ քաղաքներից մէկում 190 . . թւին :

I. III և IV Արարուածները կատարուում են Սահառունիների . II-դը Ալվանդեանների տանը ,

Ներկայացման եւ բարգմանութեան իրաւութեք վերապահուած է ենդինալին :

### ԱՐԱՐՈՒԻԱԾ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը ներկայացնում է Սահառունիների բակարանը . Մի բաւական մեծ սենեակ , որ թէ հիւրասենեակ է եւ թէ սեղանատեն : Այ պատի մէջ երկու դռեր , որոնցից աւանենի կողմինը տանում է Անահիտի սենեակը , իսկ խորինը Անեներինի եւ Կատարինի նեցաւանը ենրիք պատի մէջ դէպի ձախ դռեր : ու տանում են նախասենեակ եւ յոհանոյ , դէպի աշջ անգամ . բնվը պահանա ամանենէնի համաս : Զայ պատի մէջ , ուղիղ Անահիտի սենեակի դռերի հանդէկ դռեր , ու տանում են Արտաշեսի սենեակը . մի փոքր հնուու , դէպի յոհանը գրական : Այ պատի երկու դռերի միջև սովորական տակ : Այս ու այնուն հասարաւ պարզանաւ :

Դոները վարագործեր յունին : Պատերին կախած են հայ հին եւ նոր եղանակոր մարդկանց պատկերներ եւ « Ողի Հայուսանի » կոչուած նկարը . ձեռազոր :

### ՏԵՍԻԼ

Սինեներմ . Կատարինն է Նազանի :

Սինեներմ . (Ակեխառզ . կարա խոզած միրուով ու մացերով մարդ է . պարզ դէմով եւ շատ հասարակ ձեւերով : Բիշ նեարային է , շարժուն , դիրագրին . դիրահանան . շուտ ուղարկող , շուտ իրարոյ : Եւս է ծիսուն : Հազար է ծախս օճիսով շապիկի , ուեր փողկաս , բայի , հնաձեւ պիշակ . երկայն ժիշի , յայն պահարած : Կարդաշ-ցելիս յնուու է պէսնէկ . ու միջոց կախած է վողվը : Վարագորյ բարձրանաւակները է գրասեղակի բոլ , գրու է ,

անկա սևի բաց բողմերով զջուից վեր ծխայութի ծույղը) :

Կատարինք . (Նիհար, գեղեցիկ, բայց ոչ մեղմ դիմով կին է, հարուս եւ իիչ ափիառը մազերով) . Հազնում է ապլուրաս աւ հազուս . հասարակ . բայց ոչ անհաշակ . Վարագոյրը բարձրանակի անչի սեղանի նոյ լուանում է թշի բաժակներն ու մայրում) . Նազանիք . Նազանիք :

Նազանիք . (Գալիս է խորի դուներից աւելը ձևին, թեւերը ծաղած) . Հրամանքու . խանըմ ջան :

Կատարինք . Սամավարը տաք . Կորից եռացրու ու բեր : Արտաշէսը զարթնել է ու հագնուում է :

Նազանիք . Էս սրճաթիս : (Աւելը յնեռում է պատին, սամավարը տանում է խորի դուներով) :

Կատարինք . (Աւելորդ բաժակները տեղաւորում է պահարանում, սեղանի վրայ բողմերով մի մասուր բաժակ . հաց . պահիր . կարագ եւ մեղր . Եւսոյ կանք է առնում եւ յանդիհանական հայեացրով նայում Սենեներինինին) :

Սենեներիմ . (Եարունակ գրելով) . Զգում եմ հայեացքգ . զգում եմ : Այն վզի վրայ ազգում է ինչպէս անձիւիք սառը կաթիւներ , ո՛վ յաւի բանական վերասնկէ իմ կեսանքի :

Կատարինք . Դէտք է բազար գնու :

Սենեներիմ . (Կրիջ դուռում է սեղանի վրայ) : Հէք , վերջացրիմ , անզուգական կողակիցդ իմ . այժմ կարուի իմ ծառանել բռ տնտեսական հրամաններին : (Վեր կինում :)

Կատարինք . Երանի գիտենամ , էլի ում գմէ ես զրուում տաքացաց :

Սենեներիմ . Ինչպէս միշտ , իմ ազգի թշշամիների գմէմ : Առաջ մենք մեղադրում էին , թէ վշշխառուներ եւ հարստանաբիչներ ենք չըքանակիք պէս : Այժմ նոր ագռաներ են կեկլ եւ . նոր տեսանիք զղոցցներ սկնել : Այժմ առում են թէ հայ հասարակութիւնն ընդունակ չէ բարձր իդէալներով ոգեւորուելու : Ահա այս անզամ այս տեսակ հայտեացների հէրն եմ ուզում անձիւել :

Կատարինք . Թո՞ղ , Աստուած սիրես , թո՞ղ այդ կուբեները , բաւական է :

Սենեներիմ . Ուշ է , Կատարինք , ուշ է , Այսպէս սկսել եմ կեսանքը . այսպէս էլ պիտի վերջացնեմ : (Մօսենում է մի մեռու ցրելով)

Կատարինքին օ) Բայց հիմա Կատարինէ . քէֆն իմն է : Մի պաշապան եւ օրնական է եկել , որ թշնամիների մի ամբողջ բանակի գեմ պիտի կուռի ինձ համար :

Կատարինք . (Մեղմիկ պատում է Սենենինիմի գրից , հեզնաբար) Ո՞վ է այդ պաշտպանը :

Սենեներիմ . (Զեղը հանդիսաւոր մնկնելով դէպի ձափի դուները) Այ . նա , իմ միակ ժառանգը . որ երէկ վերացարձաւ հայրենիք գիտութեան պաշարով եւ թարմ ուժերով : Համոզուած եմ , որ նա իմ սուած կրթութիւնը չի մոռացել . որ նրա սիրոր վառ է բուռը սիրով դէպի իւր ազգը :

Կատարինք . Աստուած սիրես . մի անիծիր իմ որդուն :

Սենեներիմ . Իա . ի՞նչպէս թէ անիծել : Ազգը սիրել ու ազգին ծառացել կը հաշանակէ անիծուած լինել :

Կատարինք . Ազգը սիրել կարելի է . դա անհնքիս պարտքն է . բայց ազգին ծառայելը յիմարութիւն է :

Սենեներիմ Ի՞նչ ես դատարկ դատարկ գոււրս տալիս , կի՞ն . . .

Կատարինք . Ես երկնային պատիժ կը համարեմ ինձ համար . եթէ Արտաշէսը գնայ քո ճանապարհոն :

Սենեներիմ . (Հեկնորին) Այսի՞նքն . . .

Կատարինք . Այսինքն . եթէ . իւր բաղրը թուած . ընկնի հասարակական զորերի հսկուցք . ի՞նչ ես վաստակել զու . ի՞նչ . որ նա էլ վաստակի : Սրան հարուածիր գրչով , նրա պակասը երիսովը առուր խօսքով , այստեղ կուռի հարուանեցի հետ . թէ ազգին ինչու մեծ մեծ փողեր չեն տալիս , այստեղ հայնոյիր հոգեւորականներին , թէ ծոյլ են , ազգու են այլն : Ի՞նչ գիտեմ , քանի ու եօթ տարի է ապրում ենք ինչպէս կեանքը խորթ զաւակներ . Կէս կոշշտ , կէս քաղցած . միշտ դողալով վաղուայ համար , միշտ նողալով մի փոր հացի մասին : Ահ , եթէ իսմանայի , որ իմ կեանքն այս է լինելու . կը փթէի իմ հօր ասանը եւ քեզ հետ չէի ամուսնանալ :

Սենեներիմ . (Լույ է , զանազան նեարդային անհամբեր շարժումներ անելով) Եարունակիրք : Եարունակիրք , ինչո՞ւ գարարեցիրք : Ես խօս միշտ համերես թեամբ . լուռմ եմ քո աղուակ երգը :

Դիտեմ զու ինչ էիր սպասում ինձնից . երբ ամուսնացար հետա ։ Դու փափառում էիր . որ փաստաբանիթ թղթափանակը կոնսալտիք դրած . զոնէ գուռն ընկնէի . սրան շոյէի . նրան շողոքորդէի՝ կլինինաներ ձեռք բերելու ։ Դու աւելի երջանիկ կը համարէիր քեզ . եթէ ես . մի անգամ արդարին պաշտպանելով . հինգ անգամ գողերին ու սրիկաներին պաշտպանէի . ատէի , խարէի , խարդափէի : Այս , այն ժամանակ զու աւելի կուտ կազմէիր եւ . աւելի կը յարդէիր ինձ . Բայց ես ես չ'արի աղդ . ես ընդուրցիք ուսուցիք համեստ արհեստը . որ իս խելքիք եւ ընդունակութիւնների չափում իմ խեղճ ժողովրդին . ես իմ գրիչն ազգանցիք դատաստանական խարդաւանքների ճահճից եւ նույիրեցիք ազգին : Լաւ արի թէ վաս . Թող ուրիշներն ասեն . բայց ես այսօդ էլ չեմ զղում , չեմ զղում . չեմ զղում :

Կատարին . Խակ Արտաշէսը չի անիլ քո արածը . Աչ , նա չի հետեւիլ քո օրինակին . ես չեմ համաձայնուիլ :

Սենեներիմ . Օ՛՛ , ես գիտեմ . շատ լաւ գիտեմ . որ զու չես թողնի . Դու ամեն կերպ պիտի աշխատես խել նրան ինձնից . դարձնել մի սովորական , ողարմելիք քաղաքացիք կուշտ փորով . ճարպոտ ուղեղով եւ դատարկ զգացումներով . Բայց ես յուսով եմ . որ Արտաշիրը քո ասածը չէ . որ նա իմն է եւ ոչ քոնք :

Կատարին . Է՛՛ , եթէ նա խելօք է , ոչ իմը կը լինի եւ ոչ քոնք . այլ կը պատկանի ինքն իրան :

Սենեներիմ . Հա՛ , այդպէս ասա . Ես զէմ չեմ . Թող նա չընետեւի ինձ . ուրիշ ճանապարհով օգնի իւր ազգին . Բայց օգնի : Լոյր , Կատարինէ , լաւ լոյր : (Մօտենաւմ ի եւ ճանձը ցածացնելով) Վերջերս ինչո՞ւ նոր քամիներ են գալիս հերւոսից . Հայ երիտասարդները սկսել են , վրացիներին հսկեւելով . վրակնուրի աղդ քամիներով . այսինքն այնպիսիք զաղափարներով . որ միանգամայն հակառակ են մեր հասարակութեան շահերին . Նեթէ Արտաշէսն էլ վարսկուել է . այն ժամանակ , օօ , այն ժամանակ ահա իմ խկական զժքաղցութիւնը : Ես չեմ զիմանալ այդ քանին , ես Արտաշիրն կը համարեմ անձնական թշնամի . Հասկանում եմ , որ զիմնետես , որովհետեւ . Կատարինէ , ինձ համար ահա եւ գաղափար միեւնո՞ւ առներն

են : Ես իմն ասացի : Այժմ հրամայիր . ինչ ուզում ես :

Կատարինէ . Գնա բազար ու գնիր միս , ձուկ եւ ուրիշ ինչ-որ հարկաւոր է . Այսօր Արտաշիր ընկերները գալու են , ես ուզում եմ նրանց ճաշի պահել :

Սենեներիմ . Խսիզն . Քառորդ ժամ չանցած կը վերաբանամ ես պէտք է մի լաւ խօսեմ Արտաշիր հետ : (Վեցցնում է գրաւելունի վրայից լայնեցր զիսարկը եւ զնում խորի դուռով )

Կատարինէ . (Նայում է Սենեներիմի ետևից) Երեխայ . միշտ երեխայ . . .

## Տ Ե Ս Ւ Լ Ա

Կատարինէ իւ Անահիտ

Անահիտ . (Ներ է մտնում աշ կողմիք առաջին դուռներից : Հազնուած է պատց . մախուր եւ ոյ անձաշակ . Դեմիի վրայ նկատելի են անդաշար աշխատանիմի ինեֆ եւ յոգնածութիւն : Սակայրուածներին տեսրակներն ուղեցիք , այսօր տօն է , կարող եմ քեզ օգնել . մայրիկ :

Կատարինէ . (Թախիքի բարձերն ուղղելով) Հարկաւոր չէ . բաւական է որ գրաւերում աշխատում ես , գոնէ տանը հանգստացիք . Խեղճ աղջիկ . գու յոցնեցիք այս հինգ ատրուայ մէջ շատ գասեր տալուց : Բայց մի մտածիր , եղարայր ուսումն աւարտիլ է ու եկել . այժմ հերթը նրանն է աշխատելու : (Ուրախ) Ա՛հ , այսունասեն հետու մեզնից հոգեսր , մենք բաղդասոր կը լինենք . Այնաչս չէ . Անահիտ , Անահիտ . Ես երբէք մնալ անբաղդ չեմ համարել . մայրիկ , մանաւանդ ինձ :

Կատարինէ . (Դարձեալ օխերիլ) Է՛հ , ասում ես էլի , մտիք արա հայելուն , յետոյ խօսիր : Երէկ չէ մէկէլ օրը քսան ու չորս տարիդ լրացաւ . եւ դու գետ ծնողներիդ տանն ես :

Անահիտ . (Ճառագուներիլ) Մայրիկ' . . .

Կատարինէ . Լաւ , լաւ , մի ներանար , այսօր ես միտք չունիմ միրտ ներացնելու : (Ուրախ) Լոյր , Անահիտ , առաջ էլ ես միշտ մտածում էի Ֆլորայի մասին , բայց երէկուանից դէս նա աշխիս առջեւից չի հեռանում Կարծես . նա արդէն իմ բառն է եւ ես նրա մկեսուրը .

Արդէն ես երեւակայում եմ Ալվանդեանների հարստութիւնը Արտաշէսի ձեռքում:

Անահին . Մայրիկ, օրիորդ Ալվանդեանի հարստութիւնը չէ զբարիչ, այլ ինքը : Ֆլորան հիմանալի աղջկէ է, եւ սիրուն, եւ խելօք, եւ պարկէւտ :

Կատարինք . Ես շատ ուրախ եմ, որ դու նրան այդպէս հաւանում ես : Աւքնին, օգնիր ինձ, որ այս բանը գլուխ բերենք Արտաշէսի համար :

Անահին . (Վիրաւորուած) Մայր, Ես խնդրում եմ քեզ միանգամ առ միշտ՝ ազանկ ինձ այդ տեսակ զերերից : Ես միշտորդ լինել չեմ կարող :

Կատարինք . Լաւ, քիչ կոտրատուիր, Ֆլորան խօս ուրիշ չէ : Հնկերուէրիդ է : Նա քեզ սիրում է եւ միշտ մի բան անելիս առաջ առաջ քո խորուրդն է հարցնում :

Անահին . Ֆլորան այնքան խելօք է եւ այնքան անկախ, որ այդ տեսակ մի լուրջ բանի համար ոչ ոքի խորհուրդը չի հարցնիլ :

Կատարինք . Խակ հայրը կարող է նրա վրայ ազդել :

Անահին . Հայրը նրան այնպիսի ազատութիւն է տուել, որպիսին ունին մեր օրիորդներից շատ քերեց : Միայն Ֆլորան այնքան յարգում է իւր հօրը . որ հազիր թէ ամուսնանակառակ նրան կամքի :

Կատարինք . Որ այդպէս է, ես շատ էլ վախ չունիմ : Ալէքսանդր Ալվանդեանը Արտաշէրին մանկութիւնից է սիրում : Կարծեմ նա մի օր ինչ-որ ակնարկութիւն էլ արել է հօրդ մօս : Բայց հայրը ուշադրութիւն չի գարձրել : Ա՛ն, այդ մարդոն իւր ընտանիքի թշնամին է :

Անահին . Մայրիկ, դու միշտ յարձակվաւմ ես հայրիկի վրայ : Այդ անարդարութիւնն է : Հայրիկն Ալէքսանդր Ալվանդեանի մասիկ բարեկամն է, սիրուած եւ յարգուած նրանից : Բայց նա անքան ազնիւ եւ անշահասէր մորդ է, որ անձնական բարեկամութիւնն երբէք չի շահազործիլ ոչ իւր եւ ոչ իւր ընտանիքի համար, այնպէս որ այս կողմից հայրիկին չը պիտի մեղադրել : Բայց ապահով կաց, Ֆլորան միայն կամուսնանայ այն երիտասարդի հետ, որին կըհաւանէ եւ կըսիրէ :

Կատարինք . Արտաշէսին նա կըհաւանի էլ, կըսիրէ էլ : Ա՛ն, Անահիտ, եւ ո՞վ չի հասաւ կըսիրը :

Արլ նրան : Տեսնո՞ւմ ես ինչպէս է փոխուել : Նրա սիրուն հասակը, գեղեցիկ ճակատը, կրակու աչքերը, զանգաւր մազերը, բոլորը, բոլորը կատարեալ են :

Անահին . Այդ քո ճաշակով : Ձիօրան ունի իւր սեպական հայեացքը : Այսպէս թէ այնպէս, եթէ իմ կարծիքը որ եւ է նշանաւութիւն ունի, խորուրդ կըտաի : մարդիկ, թողնել այդ գործը իրան, Արտաշէսին : Դու կարող ես նրան բարկացնել, հայրիկին էլ գրգռել :

Դաշանիք . (Ներս է բերում սամօվարը, դուռը է սեպանի վրայ եւ, աւելի վերցնելով, կանցնում է խորի դուռերի առջեւ :)

Կատարինք . Ի՞նչ-որ էլ լինի, ես պէտք է Արտաշէսի ուշադրութիւնը դարձնեմ Ֆլորայի վրայ :

Անահին . Դու գիտես : Առ' ու, գալիս է :

### ՏԵՍԻԼ III

Նոյնին, Արտաշէսի, յետոյ Սենեկեադ

Արտաշէս . (Գալիս է ձախի կողմի դուռերից : Մասիսին, խելացի դեմքով, լայն ճակատով, առողջ կազմուածնով : բաներ ու զանգուր մազերով երթասարդ է : Հազած է սև զունի պիշտակ ու պանիրացօնիկապոյց ուսանողական շապիկ՝ որի վրա մեշջին կազմծ է մետասիսայ գօսի երկայն ծովերով : ) Բարի լոյս : (Արագ խայերով մօտենու և անջի սեղանին, նստում է եւ ոտք ոտք վրա գնում :)

Կատարինք . Բարի լոյս իմ գօշտեօրին : Հըմ, լաւ, քննցիր : (Սկսում է Արտաշէսի համար րկյ ածել :

Արտաշէս . Հիմանալին Յօթ օրուայ անքուն ճամփորդութիւնից յետոյ փափուկ անկողինն ինձ համար նեկուար էր : Հասպա, պասմեցէք ձեր կեանքից : Երեկ ժամանակ չունեցանք երկար խօսելու : (Առնում է մօրից լիի բաժակը եւ զուռն իւր առջեւ :)

Դաշանիք . (Միրով նայել է Արտաշէսին) Բօյիր դուռքան, կը թողնիս, որ օթացը սրբեմ :

Արտաշէս . (Ծես նայելով) Օօ, Նազանի, բարի լոյս, բարի լոյս : (Վեր է կենում, Նազանու ձեռը սեղմում է եւ յէս է զալիս) Խնչպէս ես, բայց ես :

Նազարին. (Ծիկորուած եւ զգացուած) Ամ-  
սուած քեզ կեանք տայ աղա :

Արտաւէս. Աղա՞ Զէ. Նազարին. այդ չեղար,  
ինձ ուղղակի անուանիք Արտաշէս : Աւելը  
թող այնակի, եկ նասիր : Աւզում քեզ հետ մի  
քէշ զրոյց անել . ես ինքս իմ սենեակը կը  
սրբնի :

Կատարին. (Սասիկի զարմացած Արտաշիսի  
վարուելից) Ինչպէս թէ գու կըսրբես, Գնա,  
Նազարին, գնա բանիք :

Նազարին. (Տակաւին չփորուած) Եի՞ պիտի  
զու սրբես, Նազարն ձեռները չուցաց՞ւ են :  
(Փետու է ճախ կողով դուեռով):

Կատարին. Մի՞թէ կարեիր է ծառայի հետ  
այգէստ վրառել :

Արտաւէս. Ինչո՞ւ չե կարելի, (Թէյ ի խմում)

Կատարին. Նա քո ընկերն է թէ հաւա-  
սարը : Մեզը ու կարա կեր :

Արտաւէս. Ինձ համար բոլոր մարդիկ հաւա-  
սար են: Դէս, Անահիտ, ասս է. Ք՞նչ ես լուել:  
Դու հիմնայի համակներ էիր գրում ինձ:  
Զարմանայի գիտես զէպքերը հանգամանորեն  
նկարագրեն: Ես քո մի քանի համակներից  
կազմել եմ թթավացութիւններ մայրաքաղաքի  
լրացիների համար: Վաթուուն ոռուի վարձ  
եմ ստացել, կէսը քեզ է պատկանում: (Հաց  
ու պանիր է ուտում):

Կատարին. Ի՞նչ, զու է՞լ ես գրում լրա-  
գրիներում: (Վերջնում է Արտաշիսի բաժակը  
նորից լցնենու:)

Արտաւէս. Երբեմ:

Կատարին. Մի՞ արա, որդի, գրելուց խեր  
չըկայ: Հայր ի՞նչ շահեց, որ դու ինչ շահիս:  
(Բաժակը զնում է Արտաշիսի առջև) Հա,  
ի՞նչո՞ւ մեղր ու կարաք չեմ ուտում, կը ը,  
(Անձնենք մօտեցնում է Արտաշիսին): Յատ-  
կապէս քեզ համար ենք տուել:

Արտաւէս. Մայրիկ, կարծեմ զու ինձ զեռ  
երեխայ ես համարում:

Կատարին. Որպէս մօք համար միշտ երե-  
խայ է: Սպասիր, ես քեզ համար իւղապատառ  
կը պատրաստեմ: (Ուզում է պատասխէ:)

Արտաւէս. (Փատպով) Թո՛ղ, մայր, զու  
կատարեալ զայեակ ես ուզում լինել ինձ հա-  
մար: Երեւակայիր, Անահիտ, կէիւթեռայ ըն-  
թացքում երեք անգամ մտաւ սենեակս, որ  
տեսնի քնած եմ թէ արթուն: Ես, ի հարէէ,  
քնած ձեւացայ:

Կատարին. (Անհանգիս) Ի՞նչ, ուրիշն, գու-  
լաւ չե՞ս քնել :

Արտաւէս. (Միծաղելով) Դէս գէ, բաներս  
փշացրի :

Անահիտ. Այդ արդէն չափազանցութիւն է,  
մայրիկ :

Կատարին. Լո՛իր, գու ի հչ գաղափար  
ունիս մայրական զգացման մասին: (Արտաշի-  
սին) Թէյր խմիր, կը պաղի:

Արտաւէս. (Կատարով) Ո՞հ, զու ինձ կը սպա-  
նիս, մայրիկ: Դէս, աչքիս վրայ, ի՞նչպէս կը  
հրամայես խոել, գտո՞ւ, թէ՝ կծովի, բաժակո՞վ,  
թէ՝ պնակով: (Լուրջ) Մայրիկ, եթէ ուզում ես  
սիրոս շանել, այդ չէ միշոցը :

Կատարին. Բայս ո՞րն է, ասս, որդի, որ  
իմանաս :

Արտաւէս. Թող ինձ անուշագիր, բոլորո-  
վին անուշագիր: (Վեր է կիսում:) Դէ հս  
կերայ էլ, խմեցի էլ, բաւական է: Ո՞ւր է  
հայրիկը :

Կատարին. (Դմկամակուբամբ ոչիի է կանց-  
նում եւ սկսում է սեղանի վրայի բաները  
ժողովի ու պահարան դնել): Գնաց բազար,  
ու թթավացութիւններ մայրաքաղաքի  
լրացիների համար: Վաթուուն ոռուի վարձ  
եմ ստացել, կէսը քեզ է պատկանում:

Արտաւէս. Իմ կիւրիքի համար: Մի՞թէ ես  
կիւրիք եմ կրաւիթել:

Անահիտ. Ներիք, այս անգամ ես մայրիկի  
կոզմն եմ: Նա ուզում է քո ընկերներին պա-  
տուել ճակով: Դու իրաւունք չունիս նրան  
այդ բաւակնութիւնից զրիելու:

Արտաւէս. Թող այդպէս լինի, բայց ի սէր  
Աստծու, թողէք այդ չինական ձեւերը: Առ  
հասակակ ես ձեզ խոդում եմ իմ մասին չը  
հոգալ: Այնպէս կարծեցէք, որ ես խիի չեմ  
էլ եկել Ռուսասամից:

Կատարին. (Միծաղելով) Այդ խելքը նելոք  
խօսելը համալրանո՞ւմ ես սովորել: Ի՞նչ  
պէս թէ չեմ եկել, քանի որ եկել ես:

Արտաւէս. (Լուրջ) Եկել եմ, բայց էլի շու-  
տով պիտի գնամ: Ես ժամանակաւոր իւրիք եմ  
այսեղ:

Կատարին. Շատ ուրախ եմ, որ հանաբ  
անելը չեմ մոռացել:

Արտաւէս. Ես հանաբ չեմ անում: Ես կը  
մնամ այստեղ ամենաշատը մի շաբաթ կամ  
տասն օր, յետո պիտի գնամ եւ. այս անգամ  
• գուցէ երկար ժամանակով: (Երեսը դար-  
A.R.A.R. @

ճշնամ և յուզմունքը բացցնելու համար : )  
Լոռրիմ :

Կատարին . (Եայլ է Արտաշիսին երկարածու  
հայեցով ) Լուսեցի , Անահիտ :

Անահիտ . Այս , մայրիկ , նա կատակ չի  
անում :

Արտակու . Մի՛ ընտելացիր ինձ . մայր :  
Որքան սառը վարուսն ինձ հետ , այնքան  
հրամեցաւ թեթեւ կը լինի թէ քեզ եւ թէ  
ինձ համար :

Կատարին . (Անահիր . որ րոնած ունիք ձեռ-  
փում , զնկնում է յատակի վրայ և փշովում )  
Արդ ու կրպակին մի՛ հաւասար : Եթէկ գիշեր  
դու մի մեծ գետի ափումն էիր , ես միւս  
ափում , կանչում էի քեզ . կանչում , զու չէիր  
լուսմ . . .

Անահիտ . Ինչո՞ւ այդպէս վախեցար , մայ-  
րիկ : Նա գնում է , էլի՞ կրպայ : Երեւիք . դեռ  
քննութիւնները չեն վերջացրել :

Կատարին . Ոչ , ոչ . Անահիտ . Նրա խօս-  
քերի մէջ ինչ-որ խորհրդաւոր չեւա կայ :  
Մայրական սիրած խարել անհնարին է : (Խորը  
ճայռում է որդու երեսին) Կարելի՞ է իմանալ  
քո գնալու պատճառը :

Արտակու . Եթէ թոյլ կըսաս սուս չասել  
— ոչ , չեն կարելի : (Բայցում է ։)

Կատարին . Ուրեմն իմ բոլոր յօյսները զուշը  
էին , ուրեմն . Հնանգ երկար տարիներ աչքս  
ճանապարհն ըստ պիտի՞ սպասէի քեզ , ուրեմն  
իմ երջանիկ երազները քո մասին ծովին են  
ընկնամ : Ասա , ունի՞ս գու որդիքական սէր :

Արտակու . Ես ունիմ զօրաւոր սէր գէպի մի  
մեծ պարտականութիւն : Քանի որ պար-  
տականութիւնը կատարած չէ , չեմ կա-  
զող պատկանիլ ոչ միայն իմ ծնողներին , այլև  
ինքն ինձ :

Կատարին . Լուսմ ես , աղջիք , ես ուինչ  
չեմ հասկանում : Բացատրիր ինձ , ի՞նչ է ու-  
ղում ասել :

Անահիտ . Մայրիկ , նրա ասածն ինձ համար  
էլ մի հանեւուկ է : (Կորած անահիր փշամեջը  
ժողվում է , անմում չղուստ խորի դռներով  
եւ խոյոյն յետ է զայիս :)

Արտակու . Մայր , մի՛ ստիպիր ինձ ասել  
այն , ինչ-որ չունիմ իրաւունք ասելու : Մի՛  
ստիպիր նոյնպէս ասելու . Ես զզիւմ եմ ասեն  
ասեակ ստերից :

Կատարին . (Թուշացած նստում է) Դու այն-  
պիսի մի հարաւած տուեցիր ինձ . որ աշխարհը  
լիւխս մթնեց : Հնիգ տարի սպասել եւ վերջը  
ա՞յլ լսել : Արտաշէս , Արտաշէս , զու սիրս  
չունեն :

Արտակու : (Հապալում է ծանր) Թող արգակս  
լինք : Ներիր ինձ , ես պիսի մի քանիք կարեւոր  
նամակներ գրեմ : (Բայցերն ուղղում է դղիպի  
ձափի դուները :)

Կատարին . (Ռէշը ժողովելով . արագ ոչիք  
է կանգնում) Ոչ , կաց : Այդ ինչո՞ւ այդպէս  
ժանր համաչեցիր : Ես ուզում եմ իմանալ քո  
հոգը : Կեանք տակն ու վրայ մի՞ արա : Ինչ  
չուն համար ես փախչում ծնողներիդ անից :  
Քննութիւն ունիս :

Արտակու . Ոչ :  
Կատարին . Թեզ քշո՞ւմ են այսաեղից :

Արտակու . Ոչ :  
Կատարին . Սիրահարուած ես :

Արտակու . (Գրցուած) Ոչ , ոչ ոչ , հազար  
անգամ ոչ : Մայր , աղջում եմ քեզ , մի  
գցիր ինձ նեղը քո անհանգիստ հարցերով : Ես  
չմարտութիւնն ասել չեմ կարող . իսկ ասել  
չեմ ուզում , չեմ ուզում , չեմ ուզում : (Ուզում  
է զնալ) :

Կատարին . (Առաջն առնելով) Որդիք , ինչո՞ւ  
ես նեղանում : ախար ես մայր եմ , զու իմ  
միակ որդին ես : Ինչո՞ւ ես թագցնում ինձնից  
քո հոգուերը :

Արտակու . Ժամանակին ամեն բան կիմա-  
նաս , մայրիկ , հանդիստ կաց : Իսկ առ ամժ մի՛  
աշխատիր աղդել իմ սրտի վրայ : Այսունից կան  
զգացումներ , որոնց զու չես կարող փոխել :  
Կատարին . Այս զգացումները աւելի թանգ  
են քան մայրը :

Անահիտ . (Տեսէնիլով , որ մօր հարցերը ճըն-  
շում են Արտաշիսին) Մայրիկ , ինչո՞ւ համար  
ես այդքան զգում : Տեսնում ես , որ չեմ ուզում  
ասել :

Կատարին . (Բարկացած) Մի՛ իմասնուիք .  
քո բանը չէ : (Արտաշիսին) Ասա , աւելիք թանգ  
են քան քո մայրը : Ասա , ես մայր եմ , հաս-  
կանո՞ւմ ես , մայր :

Արտակու . (Դառնացած եւ գրգռուած) Իսկ  
ուրիշները մա՞ր չե՞ն , իսկ իմ ընկերները  
քարից են ծնուել : Մայրեր կան որոնց թըշ-  
ւառութիւնը ունի երեւակայիլ չես կարող :

Մայրեր կան, որոնց առջև գու ունիս մի խոչը պարտականութիւն։ Անս այդ պարտականութիւնն է, որ ևս յանձն եմ առել կատարել . . . ևս պիտի զնամ կատարելու։

Սենեներիմ. (Ռուսա կ զայիս խորի դրանենքից, աննկատելի կանցնում է շնչիր վրայ եւ ակուու է ականց ննել)։

Կատարինք։ Ի՞նչ ես ուզում ասել, որդի, քանի զնում, այնքան գու անհականալի ես դառնում։

Արտաքս։ Բայց ի՞նչ կարող եմ ես ձեզ հասկացնել, քանի որ ձեր աչքերը չեն տեսնում, թէ ի՞նչ է կատարվում ձեր շուրջը։ Ի՞նչ կարող եմ բացատրել, երբ ձեզ համար միայն նա է թանգ, որ մերձ է ձեր եսին, երբ ձեր սրտից չեն կարողանում ամփոփել իրանց մէջ աւելի բարձր զգացում։ Քան մայրական մէրը։

Սենեներիմ. (Ուրախանաշով, մեկուսի) Աս, ասա՛, որդի, ասա՛։

Արտաքս։ (Աւելի ու աւելի ոգեւորուելով) Կոյրեր էք գուշ, որ մայրական սէր էք տեսնում այնտեղ, ուր եսամոլութիւնն է տիրում իւր ամբողջ ուժով։ Զեր հասկացած մայրական սէրը մի ախտ է, որ միշտ մաքառել է բարձրագոյն սիրոյ գէմ եւ ջլատել է շատ ուժեղ հոգիներ։ Ոչ, հնուռ պիտի փախչել նրանից, որպէս զի աւելի եռանոցվ եւ աւելի արթուն մտքով ծառայել իսկական սիրոյ։ Ես կը ստորանամ իմ աչքում, եթէ յանուն որդիական սիրոյ փախչեմ իմ պարտականութիւնից։ Այն ինք գործ ու որ այնքան զներ է տարել եւ գեն պահնջուռ է . . .

Սենեներիմ. (Ուրախութեան եջանեներ անեղով) Ճիշտ է, ճիշտ է, տառասկալ ժողովրդի սուրբ դորից։

Կատարինք. Ի՞նչ պատահեց քեզ, որդի, ո՞վ քեզ վիրաւորեց, որ այդպէս բարկանում ես։ (Հանդարտ բայիս կ)։

Անահին. (Սի կողմ խաչուած, նայում է մեր եղածը եւ մեր հօրը, որին նիատել է միայն ինըը) Մայրի՛։

Արտաքս։ Լաց, արտասուք, միշտ մի եւ նոյն զէնքը հոգիները թուլացնելու համար։ Անս ինչու ես չէի ուզում գալ այսաել Մայր, Կերիք է, ի՞նչ կա, Կերթամ, էլի որ կը գամ։ Ի՞նչ կարիք կա լաց լինելու։ Դէ, հերթիք է, ասում եմ ախ, մի ախասիք պար-

խիցս վոնտել գաղափարներ, որոնք այնաեղ հաստատուել են առ միշտ։ Բաւական է։ Շիկացրած երկամբը դժուար է արցունքներով ասացնել։ Մայր, Թող, որ իմ սուխտը հաստատ մնայ, իմ երդումն անխախտ։ Մի անգամ, որ պարտականութիւնը կանչել է ինձ, պէտք է գնամ, պէտք է գնամ։ Բաւական է, ասում եմ։ Դէ լաւ, լաց եղիր որքան կամենան։ Եթէ հեղեղ անգամ զառնայ քո արցունքը, չի կարող իմ ճանապարհը կապել։ (Գնուու է ձախ կողմի դրաներով)

#### ՏԵՍԻԼ IV

Խոյել առանց Արտաօսիս

Սենեներիմ. (Առաջ է զայիս ոգեւորուած) Որդին իմն է, իսր։ Իմ ցանածը ծիլ է, ծաղկել եւ պոտուզներ է տալիս։ (Դառնալով դեպի այն դուռը որով Արտաշէսը զնաց) Օրէնուի քո եկած ճանապարհը, աւելի օրէնուի այն ճանապարհը, որով պիտի գնաս։ (Դառնալով կնորին ու աղջկան) Ի՞նչ էք մայր ու աղջկի գարացած մնացել։ Չը լսեցի՞ նրա խօսքերը։ Այդ սոկի խօսքերը պիտի գրոշմուած լինին իւրաքանչիւր հայ երիտասարդի սրտում։ Անակամ, չնչ նապատանում քո եղրօրով։ Ի՞նչ-որ հայրը քարոզել է խօսքով ու գըսով, նա ուղարկու է կատարել գործով։ Կին, տեսնո՞ւմ ես ինչ սոդի ունիս։ « Նիկացրած երկամբը դժուար է արցունքով ասացնել։ » Եւ զուարի խօսքերը յետոյ զարձակա՞լ լաց ես լինում։ Յիմար ես, յիմար, ուրիշ ոչինչ։ Որդիի որոշել է ծառայել մայրենի ժողովրդին, եւ զուար լաց ես լինում։ Աս, ի՞նչ կասես, Անահին, ինչո՞ւ ես լուս։

Անահին. (Մազարաղ) Հայրիկ, ես աշխատում եմ հասկանալ Արդաշիսի միտոքը։

Սենեներիմ։ Հասկանալ, ՚ո՛, ի՞նչ անհասկանար բան ասաց նա։ Նա յիշեցրեց իմ երիտասարդութիւնը, երբ մի այսպիսի օր հօրս հետ կռուեցի եւ անից փախու։ Նա ինը կեանք նիշունց։ Ո՛չ, ի՞նչ սիալուած եմ եղել ես, կարծելով, թէ նուսասանը հայ երիտասարդների մէջ սպանում է ազգային զգացումը։

Կատարինք. (Այները սրբեկ եւ կատարի նայում է Սենեներիմին) Հերիք է, ինչլազար, Տէ՛րիկ է. R.R. @

Սինեթերիմ. Ահա, ոչ. հերիք չէ: Մարդու կեանգումը այսախսի երջանիկ օրեր հազիւ են պատահում: Խելագար եմ, այս՝ գիտեմ. ոգեւորում եմ: Խնչ անենք. մայրա ինձ այսախս է ծնն: Բայց դու ինձ նախանձում ես, Կառարինէ, ալդ պարզ է: Որովհեան Արտաշէսն իմն է եւ ոչ քո՞ր: Որովհեան ափածը չի ուղում քո թեւերի տակ ապրիլ: Աղորմելի՛, ի՞նչ էիր սպասում: որ նա զալուսանից մինի լրագուներում յայտարարել՝ այս ինչ թժիչին ընդունում է այս ինչ ժամեներին: Ակէք ք. եկէք ք. առուրիներ բերէք, որ ձեզ իվերին երուսաղմէմ ուղարչի: Դու պահանջում էիր, որ նա զառնայ մէկն այն հսամոլներից, որոնց զէմ ես այնքան կառւել եմ Հայ. Հայ, Հայ, գիտեմ, գու նրա համար մինչեւ անզամ հարսնացու էլ ես պատրաստել: Ինչու չէ, Ֆլորան սիրուն առջիկ է, համակերի: պարկեշտ. հարուստ. օօ. մանաւանդ հարուստ: Բայց չեղաւ, աս չեղաւ. հնտոյ քարին դիպաւ: Արծիւր չի ուղում աղանի գանանլ եւ իւր բունը հաստատել քա կտուրի տակ: Նա թոշում է հեռու, հեռու, բարձր ու բարձր: Եւ ես ուրախ եմ, օօ. մանահման ուրախ:

Կատարինէ. Անսիրս, անհոգի. անխելք, բաւական է քրիպել, ինձ էլ լսիր. որդիդ ձեռքից գնում է:

Սինեթերիմ. (Տակաւին ոգեւորուած) Աս. ի հարդէ, գնում է. բայց ուր. հասկանում ես, արդիօք: Նա գնում է մի տառապանակ ժողովրդի գիրկը. ուր գնում են նրա ընկերները: Նա ուխտ ունի. չը լսեցի՞ր. երդում: Հասկանում եմ. Նա թժիչ է, իսկ այսանդ թժիչների մեծ կարիք կայ. ես հարիւր անդամ գրել եմ այս մասին:

Նազակն. (Դուռ և զայիս ձախ կողմի դոներից երկայն աւելի ձեռքին եւ զնում է շեփի խորի դոները:)

Սինեթերիմ. Դնա խոհանոց. Նազանի, ես գնել եմ ամեն բան: Բոլոր շնորհք դոր զիր եւ ամենանիւր կերպակուըները պատրաստեր: Այսու Սենեկերիմ Սահառունին տօնախմբութիւն ունիր:

Նազակն. Աչքիս վրայ: (Գնում է խորի դոներով:)

Կատարինէ. Լսի՞ր. գիծ. լսի՞ր. հարած առանց խմելու. եթէ քո գլխի վրայ Աստված

ու կրծքի տակ խիղճ կայ. մի՛ կործանիր իմ որդուն: Նա իմ միակ յօյմն է. չըւնիմ ուռ թիշ, պահի՞ր նրան այսանդ. մի՛ թողնիր դնալու. ապա թէ ոչ՝ կը փոշիմանես. շատ կը փոխմանես: (Կորագ լայներվ զնում է խորի դոներով:)

Սինեթերիմ: (Ենելից նայերով) Հսո՞ւմ ես, Անահիտ: Նա ինձ փոքրացրել է. ուղում է որդուս էլ փոքրացրել: Բայց յուսով եմ. որ այդ չի յաջողիլ: Ասա, որամազդութիւնից պիտի օգտաւել: Խսկոյն պէտք է գրել մի յօդւած « շկեցրած երկաթ » վերնագրով: (Մօսենուն ցրականին է:)

Անահիտ. Բայց. հայրիկ. ինձ թւում է, որ դու Արտաշէսի ասածները սխալ հասկացար:

### ՏԵՍԻԼ Վ

Սինեթերիմ, Անահիտ, Ձյօրա, յեռյ Կատարինէ

Ձյօրա. (Գայիս է խորի դոներից: Սիրուն, վայելյակամ օրիոր է, կիր ու կենեանի ձեւերով: որ զերծ են կոկուրինից: Հացնուած է հարուստ, պարզ, նաշակով: Զեռն ունի մի զեղեցիկ բակ) Այ քեզ նորութիւն: Արտաշէսն եկել: Ես այդ շրգիտէի: Նազանին ասաց: Շնորհաւորում եմ, սիրելիս: (Համբուրցում է Անահիտի նես): Պարոն Սենեկերիմ, թոյլ տուէք ձեզ էլ շնորհաւորիլ: (Մօսենուն է եւ աշխոյնով սերուն Սինեթերիմի ձեռքը:)

Սինեթերիմ. (Խոր չի նստել գրասեղանի բով) Շնորհակալ եմ, Ֆլորա, շնորհակալ եմ: Դու իրաւունք ունիս ինձ շնորհաւորելու:

Ձյօրա. Ես էլ նոր լուր եմ բերել քեզ հասար. Անահիտ: Գիտեմ որ քեզ կուրախանին Հայրա ալսօր ձեր ուստամարանին նուիրեց հազար բուրելի:

Անահիտ. Այդ խսկ որ շատ ուրախալի լուր է: Մեր ուստամարանը մեծ կարիք ունէք: Շնորհակալութիւն խեղճ աշակերտուէիների կողմից:

Սինեթերիմ. (Ենելով գրասեղանի բով) Ալէքսանդրը մեր օրինակիլիք բարեկարծներից մէկն է: Եւ ես շատ ուրախ եմ, որ նա իմ բարեկամն է:

Ձյօրա. Բայց ես քեզ վրայ բարկացած եմ, Անահիտ: Դու Փողովարարութիւն ես անում Հայաստան Արքունութեան գաղթականների հա-

Ամար եւ համարձակվում ես ինձ մոռանալ :  
Ամեթք քեզ :

Անահիտ . Ես քեզ այնքան եմ ձանձրացրել  
իմ դիմումներով , որ այլ եւս ամաչում եմ :

Ֆլորա . Օօ՛ , «ձանձրացրել եմ» , կարծես ,  
քեզ համար ես դիմում : (Բաց է անում բազ-  
կից յաշ արած խակը եւ այնտեղից փող դուրս  
թերելով տայխ է) Ահա՛ , ես հայրիկից վերցրի  
մաքաժինը :

Անահիտ . (Համերեղով փողը) Երկու հարիւր  
րուրի : Կը ըստ մեր գահնապահին , նա քեզ  
անդորրագիր կուղարիկ : (Դեռևս է պահա-  
տանի մեջը)

Ֆլորա . Այժմ դիմնք գործի : (Մի ձեռով  
գրկերով Անահիտին , սկսում է երա հետ անցու-  
ղաբար անեց) Այդպէս , ուրիմն . եղբայր եկել  
է : Երեւակայում եմ , որքան փոխուել է :  
Բայց ո՞ւր է :

Անահիտ . Զքաղուած է . շուտով . երեւի ,  
դուրս կը գայ :

Ֆլորա . Զքաղուած է . օօ՛ , ի հարկէ . չէ՞ որ  
այժմ քժիկ է . գոքտեօր :

Սինեներիմ . Անահիտ , էլի ո՞վ է ձեռք տուել  
գրասեղանիս :

Անահիտ . Ոչ ոք , հայրիկ :

Սինեներիմ . (Թերերը քրթելով) Բաս ո՞ւր է  
իմ «Բարոյական լիլլապուտաներ» անտևով  
յօցուածք : Անա գտայ : (Պեսսնեն դնելով . լս-  
կրում է կարգադայ)

Անահիտ . Հայրիկ , մենք քեզ խանդարում  
ենք : Դնանք իմ սենենակս , Ֆլորա :

Սինեներիմ . Ոչ , ոչ , մասցէք այսակդ : Եր  
չեմ պարապում , այլ այնպէս : Ինձ համելի է  
ձեզ լսել :

Ֆլորա Ասա է . Անահիտ , շատ ես ուրախ:  
Ի հարկէ , մի հատիկ եղբայր ունենալ , հինգ  
ասրի չը տեսնել եւ յանկարծ մի օր տեսնել :  
Ես եղբայր չունիմ , բայց զգում եմ ինչ ասել  
է քրոջ սէր :

Սինեներիմ . (Զեռագիրը գրչով ուղղելով)  
Դու էլ ունեիր , Ֆլորա , զու էլ ունեիր եղ-  
բայր : Երթք տարեկան էիր , երբ նա մեռա-  
բկացաւից : Գավիրը մի սիրուն աղայ էր կա-  
պուր աշերով , գանցուր մազերով :

Ֆլորա . Ես յիշում եմ նրան երազի պէս :  
Անահիտ . Ես էլ : Միսս է , նրա սպիտակ

գագաղը գուրս տանելիս՝ հանգուցեալ մայրդ  
ուշաթափուեց :

Սինեներիմ . Ճիշտ այնպէս , ինչպէս Ալէք-  
սանդրը եկեղեցում ընկաւ թեւերիս վրայ  
Ովսաննայի դիմակը գուրս տանելիս , Ալէք-  
սանդրը սիրում էր իւր կեսանքի ընկերուեռուն  
Ովսաննայի մանը նրա համար սոսկալի հար-  
ած եղաւ :

Անահիտ . Հայրիկ , թողնենք այդ խօսակ-  
ցութիւնը . Ֆլորան տիրուած է :

Սինեներիմ . (Յետ նայելով) Աս , Բնէլ , արխ-  
րում է : Ես չեմ թողնել , արգելուած է : Այ-  
սօր մեր անը տօնախմբութիւն է :

Կատարին . (Գալիս կ խորի դոներից ,  
հազարի թեւերով ուղղելով :) Ֆլորա:

Ֆլորա . (Անձիշապես տիրութիւնն անցել  
է) Ահ , արկին կատարինէ , աչք լոյս , շնոր-  
հաւորում եմ : Համբուրվում է) Վերջապէս ձեր  
փափակին հասաք :

Կատարին . (Հատաշում է , բայց աշխատում  
է ուրախ ձեւանազ) Այս , սիրելիս , հասայ...  
Գլխաքիզ կերցրու . նստիր : Այսօր զու մեզ  
մօտ ես ճաշում : Արտաշիսի ընկերները պիտի  
զան :

Ֆլորա . Ուրախութեամբ կը ճանաթանամ  
Արտաշիսի ընկերների ենա : Բայց ճաշի չեմ  
կարող մնալ . զուք զիսէք . արկին կատա-  
րինէ , որ հայրիկս առանց ինձ երբէք չէ  
ճաշում :

Կատարին . (Ցածր ձայնով եւ խորհրդաւոր)  
Գալիս է :

## ՏԵՍԻԼ VI

### Նոյնին և Արտաշէ

Արտաշէ . (Գալիս կ արագ յայլերով ձախ  
կողմին դոներից , ձեռքին երկու ծրար) Անա-  
հիտ . Այսեղ մօտիկ փոստարկդ կայ :

Անահիտ . Այս , ուղիղ մեր տան զէմ ու  
գէմ :

Արտաշէ . Տար այս նամակները եւ քո  
ձեռքով գցիր :

Անահիտ . (Առնում է ծրարները եւ զում  
խորի դոներով )

Ֆլորա . Յարգանքներն մեր մեծապատիք  
գոքտեօրին :

**Արտաքս.** (Նոր միայն նկատելով Ֆլորային) Աս, օրիորդ Ֆլորա, ներողութիւն (Գել և տախի բարեկամաբար) Ե՞նչպէս էք, իմ նախկին աշակերտուհի: Աւարտակիքք գիմնազիան:

Ֆլորա. Արդէն երկու տարի է:

Կատարին. Եւ ինչպէս. ոսկէ մեղալովլ:

Ֆլորան ամրող գիմնազիայի աշքն էր . . .

Ֆլորա. (Հեղեղուն) Եւ իմ գուրս զալուց յիտոյ գիմնազիան կուրացել է. Տիկին Կատարինէ:

Արտաքս. Ե՞նչպէս է ձեր հայրը, օրիորդ:

Մի ժամանակ նա ինձ սիրում էր:

Կատարին. Նա այժմ էլ քեզ սիրում է եւ միշտ հարցնում է քո մասին: Դու պարտաւոր ես տաճին վրայից նրան անել:

Սինեներիմ. (Միշտ գրադրած գրանդանի բոլով: Մեկուսի:) Էւ՛ը, թաշնորս թակարդը դրեց: (Ենք և մերի անուն պենսների վերելիք:) Տեսնե՞նք:

Արտաքս. Մայրիկ, ես վիզիտուներ անելու մտցրութիւն չունիմ:

Սինեներիմ. (Չարախմադուքամբ, մեկուսի) Էւ՛ը, կերապ . . . (Երեք դարձնում է դեկի գրանդանի:)

Կատարին. Բայց մի՞թէ չես կամենալ տեսնել հօրդ բարեկամին:

Արտաքս. Այժ իմ բարօպական պարտքն է: Ես միշտ յարգել եմ պարոն Ալվանդիանին: (Հրաւիրելով Ֆլորային նսել, շարունակում է երա հետ խօսել յածեր:)

Սինեներիմ. Ալէքսանդրին պիտի միշտ յարգել: Նա ազգասեր հայ է:

Անահին. (Վերապահնում է խորի դուներից յուղուած եւ, մօտենազով, շշեցում է Սինեներիմի ականջին:)

Սինեներիմ. (Վախեցած) Մի՞թէ: (Արագ բայց երա զնում է խորի դուներից:)

Կատարին. (Տեսնելով, որ Արտաքսը սիրաշիր խօսակցում է Ֆլորայի հետ ուրախացեց եւ) Անահին, համոզիր Ֆլորային, որ ճաշի մնայ (Ինչ—որ վերցնում է պահարանից, զնում խորի դուների վերաբերյալ):

Ֆլորա. (Ոգեառորուած) Մի՞թէ: Անահին, ինչպէս մի երկոյ Արտաքսը մնզ զականցրեց: Նա իւր սենենակում զասեր էր պարտաստում, մնաք այստեղ թէյ էինք իստում: Ցանկարծ

լուցենք նրա գոռոցը: « Վրէ՛տ, վրէ՛տ պէտք է առնել այդ զազաններից »: Մենք վաղեցինք նրա սենենակը եւ ինչ տեսնենք:

Անսինք. Գլուխը սեղանի վրայ գրած, հեկեկում է:

Արտաքս. (Մասյա) Յիշում եմ ես այդ երեւոն: Դա այն զազան զաւառապետ Դուրադովի պատութիւնն էր, որ կարտացի ընկերուս նամակում, ինձ վրայ ազդեց այնպէս: Նա մի գիւղի բնակիչներին ամրող օր պահել էր անձրեւի տակ չոքած եւ յետոյ ծնծելով սպանել էր երկու ծեր գիւղացիների:

Կատարին. Այդ տեսակ բաները երեխայութիւնից ազգում էին քեզ վրայ:

Սինեներիմ. (Թեև է զայխ խորի դուներից նկատելի շփորուած:) Արտաչէս, այսակե եկ:

Արտաքս. (Մօնենում է հօրը):

Սինեներիմ. (Ծշշինով ինչ—որ տառն է Արտաչինի:

Կատարին. (Զրադեցնում է Ֆլորային.) Ինչպէս եւ հաւանում Արտաչիսին:

Անահին. (Հետորից անհանգիս նայելով հօր ու եղարօր:) Մայրիկ, գգո՞յի:

Սինեներիմ. (Ցածր ճայնով) Այդ ի՞նչ է նշանակում:

Արտաքս. Ինչի՞ մասին էին հարցնում:

Սինեներիմ. Ո՞րտեղից ես եկել: Ե՞րբ, քանի՞ ժամանակ պիտի մնաս:

Արտաքս. Դատարկի բան է, մի՛ անհանգրառանար: Առջորական ուսուկանական հարցու փորձ է . . . (Նորից մօնենում է Ֆլորային.)

Կատարին. Արտաչէս, չշմարիս չէ՞: որ Ֆլորան շատ է փոխուել: Մտիկ արա, դու արաբիսի սիրուններ շատ եւ տեսել քո Ռուսաստանում:

Ֆլորա. (Կարմերկով) Տիկին Կատարինէ, եթէ այդպէս խօսեք, ես այլեւս ձեր տուն չեմ գալ: (Եւր է կենում:)

Սինեներիմ. (Կատարած) Կին, զգոյշ խօսիք:

Արտաքս. (Լուրջ եւ խիս) Մայրիկ, ես քեզ արգելում եմ այդ տեսակ խօսակցութիւնն իմ ներկայութեամբ: Նստեցէ՞ք, օրիորդ, այդ մի անդաջոյ զարձուած էր:

Կատարին. (Աշազած եւ ամաչեղով) Դէ լաւ, ի՞նչ ասացի, որ ամեն կողմէից յարձակվում էք վրէս: Դուք խօս ասարներ

չէք, մանկութիւնից էք ճանաչում միմեանց : Անահին . ԱՅ, կարծեմ գալիս են : (Ետապով գնում է խորի դռներով :)

## Տ Ե Ս Ւ Լ. VII

Նոյն, Ֆիգրան, Ճանա եւ Կոյմզար.

Ֆիգրան . Ենդ դեմով . համես ձեւերով երթասարդ է, մայուր հանձուած : ) Բարով ձեզ : (Արտաշուին ձեռ է տալիս, միւսներին խաղաղավարի զրոխ բեկեղով :)

Հրանք : (Բարական երկայն խրձանուած մաղերով . Անդ մայասով . լայն կակով և խորե ընկած վառ . անհանջիս այժեղով երթասարդ է : Հազուած է շատ անփոյր : Անփոյր են եւ մրա ձեւերը, երթեւն ենց խոկիս : Ողջոյն, ընկեր : (Անուր քափակ սեղմուն է Արտաշուի ձեռ և հագիր ուշադրութիւն է դարձնուած միւսների վրայ :)

Նոյիմզար . (Մենուն է ներս միւսներից ուշ, Անահին ուղելիութեամբ : Երկաներ, կասպոյ այժեղով, մի ինչ դրաւարդային, բայց ոչ կուպի ձեւերով օրինդ է : Հազու է հասարակ առուեա պարզ սեղազնյ շշազգես, դղամարդի օճիք, փողկապ, պարզ զյաւարի առանց փետրի կամ ծաղկիների : ) Բարիւ ձեռ : (Արտաշուի մեռ սեղմենով, ընդհանութիւն զրոխ է տալիս :)

Արտաքս . (Հասարակ ձեւով երկայացնեցով) Իմ բնկերները : Իմ ծովոներն ու քոյրը : Օրիորդ Արվանդեան :

Միմեանց բարեւում են .

Անահին . (Հիւերին արուներ է տալիս :)

Ունանի նստում են, ունանի կանգնած մնուեն :

Հրանք . (Անփոյր ընկեղմում է քախսի վրայ:) Կատարին . (Ծիրանանին) Դուք սերին վարդառուէ ներսիսանի րորդին չէք :

Ֆիգրան . (Բարականավարի) Այս, արկեն :

Կատարին . Աւարասեցիք ձեր ուսուում :

Արտաքս . Երկու քակուլտես—ընակիսականը եւ իրաւանականը :

Սենեկերիմ . (Հրանքին) Ինձ թուում է, որ ես ձեզ մի տեղ տեսել եմ :

Հրանք . Անշուշաշ երկու զարատավօյների մէջ :

Սենեկերիմ . ԱՌ, ես ձեզ տեսել եմ մի

բազմամարդ ժողովում : Դուք ճառ էիք ասում շատ տաքացած էիք խօսում, բայց բովանձաւ կութիւնը մոտացել եմ :

Հրանք . Սարասիփ անհամեշտութեան մաս սին : Ինձ ուրիշ նիւթ չի հստաքրքրում, Միամասուս ունի՞ք :

Սենեկերիմ . Համեցէ՞ք : (Առաջարկում է ծխախութ ունի՞ք :)

Հրանք . (Միախոտը վերցնում է եւ զառում Սենեկերիմի առաջարկած լուցիուր, ոչ մի հշանով շնորհալայութիւն ցրյայտներով :)

Անահին . (Որ ցածր խօսակցութիւնը ճառիմ գտի եւ ծրոյարի հետ) Այս, օրիորդ, ուսուցչուհի եմ թէ զպրցում եւ թէ մասնաւոր տներում :

Նոյիմզար . Վարժուհուութիւնը համակրելի արհեստ է, բայց մարդու ներվերը քայլայում է :

Հրանք . (Անուշայի բողնելով Սենեկերիմին) Նոյիմզարն էլ երեք տարի, եթէ կարելի է ասել, կըթել է մատաս սերունդը : Բայց այն օրից, երբ, վերջապէս, հակացել է, թէ ըրգեհի ժամանակ աւէլուրի չեն երգում, թողել է եւ անցել մեր բանակը :

Սենեկերիմ . Ձեր բանա՞կը : Այդ Քնչ բանակ է :

Հրանք . Արտաշէսը ձեզ կըբացատրի : Թէ՛ւ, ձեր ծխախութ շատ թոյլ է : (Զգում է յատակի վրայ եւ ոտով հազցնում :)

Կատարին . (Հրանքին) Դուք ո՞րտեղ էք աւարտել ձեր ուսուում :

Հրանք . Տարրականը բանսում, միջնակարգը աբսորում, իսկ բարձրագոյնին զետ չեմ արժանացել :

Կատարին . (Ակզած եւ աւրսափած հնուանում է Հրանքին :)

Սենեկերիմ . (Միամարատ ծիծաղելով) Այդ լաւ ասացիք : Յուսուլ եմ, որ բարձրագոյն ուսուում էլ կանցնէք հայրենիքի համար :

Հրանք . Մենք հայրենիք չունինք :

Սենեկերիմ . Ուզում եմ ասել՝ հայ ազգի համար :

Հրանք . Մենք ազգ չենք ճանաչում :

Սենեկերիմ . (Ծնցուելով) Իա՛, ի՞նչպէս թէ ազգ չէք ճանաչում : (Ուժի է կանցնում եւ, մի զարևացական հայեաց ձգեղով Հրանքի

վրայ, ոսից մինչեւ գլուխ; հեռանում է : ) Նոյիմզար. (Շարունակ Ֆլորայի եւ Անահիթի հետ խօսում է : Անահիթը է : ) Առում են հայ օրիորդները ծայրայեղ պազմէքրներ են : Դուշէ է :

Անահիթ . (Դրախմե և կտրուկ) Այս՝ օրիորդ: Նոյիմզար . Ինչո՞ւ արդպէս խիստ եղանակով ասացիք :

Անահիթ . Որովհետեւ պարհենում են՝ դրանով :

Նոյիմզար . (Հեգօրէն մաքաղով) Կեցցէք : (Դառնալով Ֆլորային) Գուցէ գո՞ւշ է լ, օրիորդ:

Ֆլորա . Զը գիտեմ. այդ մասին գեռ չեմ մտածել :

Նոյիմզար . Մեր ժամանակում գեռ չէք մտածել : Հետաքրքրական է : Թոյլ կըսուք, պրիորդ, ձեզ հետ մօտիկ ծանօթանալու :

Ֆլորա . Աւրախ կըլինեմ: Խնդրեմ մի օր շնորհ բերել մեր տուն :

Նոյիմզար . ) Շարունակում են խօսել ցածր Անահիթ . ) ճայնով :

Նազարի . (Երեւում է խորի դրաների մէջ մի ձեռին դանակ. միւս ձեռում մի բատրան, քերեր ծարած : ) Խանը, մի հստեղ եկ :

Կատարինք . (Շատպով ցնում է, նազարուն նշանեերով յանդիմանում եւ Երա հետ հեռանում խորի դրաներով : )

Հրանք . Հետաքրքրական է իմանալ. այդ բնչ պատկերներ են զարդարում այս պատրը: (Վեր է կենում եւ, ձեռները պանդարինի գրպանեերը դնելով մարի և անուն պատկերներին : )

Տիգրան . (Որ շարունակ առանձին խօսակցում է Արտաշիսի հետ) Այդ բոլորն ազացուցանում է, որ զու պէտք է զգոյշ լինեն: Վասոին արդէն բռնել են :

Արտաշ . (Ցածր) ձշմարի՞տ :

Տիգրան . Այս . Երէկ երեկոյ: (Շարունակում է շշնչինով : )

Կատարինք . (Ծեծ է զայխ խորի դրաներով: ) Անահիթ, կամաց կամաց սեղանը պատրաստենք :

Անահիթ . Այս, մայրիկ: (Ֆլորային եւ Նոյիմզարին) Ինձ ներեցէք: (Սկսում է մօրն օգ-

նել, պահարանից ձաշի սեղանի վրա տեղափոխելով աւաններ, դանակ. պատառախաղ, եւ այլն : )

Հրանք . Այս, այս, բոլորը միմիկանց համապատասխանում են :

Սեննեերիմ. (Ֆլորային մօտենաղով: Հրանքին) Դուք, անկասկած, ամենքին ճանաչում էք :

Նոյիմզար. (Մօտենում է Արտաշիսին եւ Տիգրանին : )

Հրանք . (Հեղմարար) Ո՞վ չի ճանաչում այս պազիք, այսպէս կոչուած, սիներին: Եթէ Արտաշն երէկ միայն մտած չըլինէք այս տաճարը, կարելի էր կարծել, որ նա էլ կուպացած է :

Սեննեերիմ. Ֆլորա, նա ի՞նչ է ասում: (Նայում է հեռուից Հրանքին ոսից ցղուխ: )

Կատարինք . (ձաշի սեղանի մօտ զրադուած) Անահիթ, ութ հոգի չե՞նք :

Անահիթ . Եօթ . մայրիկ. Ֆլորան չի ուղարկում միան :

Հրանք . (Նայելով պատկերներին) Ոչ, ոչ, այսաեղ նայեցէք, շատ հետաքրքրական է, շատ :

Նոյիմզար . (Տիգրանին) Այդ կոպիտը ծերուանուն վրասորելու է :

Տիգրան . Զը պիտի թոյլ տալ: (Բարձր) Հրանք, արք այստեղ :

Հրանք . Վարդան Մամիկոնեանից սկսած մինչեւ մեր ժամանակակիցները: Այս ի՞նչ է, մի ծերունիք, հպիսկոպոսի միրութով, սուրբ ձեռքին վրէք է աղաղակում: Օհո՛, հօ, գրա՞նք էլ կան, նորագոյն հերոսները խորհրդաւոր դէմքերով: Հայաստանի փրկիչներ: Ի՞նչ ինքնահան, անբարտաւան գէմքեր: Ազգային բռասանի խրութակներ:

Սեննեերիմ. (Բաւական գրզուռած, մօտենում է Հրանքին: ) Այդ ի՞նչ էք ասում, պարո՞ն: Դրանք մեր ազգային նորագոյն նահատակներն են :

Տիգրան . (Բռնելով Հրանքի թերը: ) Զսպիր քեզ, աղջը չէ :

Հրանք . Զըսնչով, միշտ ձեռները պանքարչինի գրպանեներում: Որը վելարով, որը գրահաւորուած, որը գրիչը ձեռքին, որը թուրք, պատրաստ են հարուածելու իրանց ազգի թշշնակներին: Հէպ, ահա եւ հայկական պա-

աերի սովորական պատառաը — « Ոզի Հայաստանի » : Մի հաստավիզ բարքուայ զեղեցկուի աւերակենիրի վրայ նասած , (Դաշտառուն է նայի ) սիրանորուած ինքն իւր զեղեցկութեան վրա :

Սենեերիմ . (Հազիւ զապուտ և կասարարինաւ) Ար ինձ նուերել է իմ նախկին աշակերտներից մէկը :

Հրանք . Արին . անզուշտ . կրթել էք այդ նկարի ոգով :

Սենեերիմ . Թէկուզ այդպէս , երիտասարդ պարուն . թէկուզ այդպէս , ի՞նչ կասէք արքեօք :

Հրանք . (Կոչ) Այն կասեմ , որ այդ մինչեւ անգամ ազգակիրութիւն չէ . ալլ ազգամշտութւն :

Սենեերիմ . Արին . յուսով եմ , դէմ չէք դուք եւ ոչ մէկը ներկայ եղողներից :

Հրանք . Հրաժարելով հրաժարմք ի մոլորեթենէ :

Տիգրան . (Ուժդին բաշելով Հրանքի թեր) Լսելու ես , վերջապէս թէ՛ չէ :

Արտաւէ . (Մի անկիւնից անհանգիս դիտում է :

Սենեերիմ . Ահա թէ ինչ . ուրինմ դուք . . .

Հրանք . Մենք այդ բոլորը պիտի դժբնք պատութեան արխիւր եւ . փոխարէնը մեր պատերին պիտի կախենք աշխատաւորի պատերին իւր կոշտ ձեռներով եւ . խորշուած ճակատով :

Նոյնիմար . (Անհանգիս) Հրանք , այդպէս չէ կարելի :

Հրանք . (Խիստ եղանակով) Հապա ի՞նչպէս , երկար առքիներ մարգիկ մոլորեցրել են ժողովրդին . պանել են խաւարի մէջ , մէ՛թէ բաւական չէ :

Սենեերիմ . Լսում էք . երիտասարդներ եւ . օրիորդներ : Լսում ես , Արտաշէս : Այդ աղանք ընկերը չէ , սիալմար է մտել այսեղ : Ո՞վ է մոլորեցրել . պարոն , ո՞վ . . .

Հրանք . Բոլոր այդ երեւելիները , մեր պապերը , հայրերը , դուք , սերնպէս սերունդ , յամուն մոլենանդութեամբ :

Սենեերիմ . Անահիտ , այդ ի՞նչ է ասում :

Անահիտ . (Մոտենալով հօրը) Հայրիկ , մի՛ վրդովուիր :

Կատարինք . (Ծիփրուած) Այդ մարդը հերե-

րին պատուել չէզիսէ : Մի՛շտ վէճ : (Դնում է խորի դոներով )

Նոյնիմար . (Մօտենել և Արտաշիսին) Ես ցաւում եմ , որ այդ կոպիտին նեսու բերեցի :

Ֆլորա . (Ծիփրուած դիտում և մեր մէկին , մեր միւնին :

Սենեերիմ . (Ճակատը շիկելով) Այդպէս չէ կարու լինել : Այստեղ մի թիւրմացութիւն կայ : Մի՛տքը է թուլացել , թէ՛ ականջներս լաւ . չեն լուսում : Բայց նա զարդ խօսեց , համարձակ . աներկելու :

Կատարինք . (Յեթ և զայիս խորի դոներով)

ձաշը պատրաստ է :

Անահիր . Խոդրեմ , նստեցէք , պարոններ : (Նոյնիմարին) Խոդրեմ , օքորոր :

Ֆլորա . Ինձ ներեցէք : Ցանկութիւն : (Գրալիս և ատիս և զնում և խորի դոներով , մերձիղ Կատարինքի բախանձք , որ դոների մօս մի անգամ եւս աշխատու և երան հանդ զել անչի մնալու :)

Տիգրան . (Բունելով Հրանքի թեր , տանում և բանի խորի : ) Դու բոլորովին տակտ չունիս : Դու մինչեւ անգամ կոպիտ ես :

(Այստեղ մինչ Արտաշէս ու Սենեերիմը խօսում են աւանսենի վրայ . բեմի խորուն Կատարինքն աշխատու և Հրանքին համոզել անչի մնալու : Անահինը խօսում է Նոյնիմարի և Տիգրանի հետ :)

Սենեերիմ . (Աշխատել և իրան զավել : Բըռնում և Արտաշինի թիւիցը և բաշուն երան դեպի աւանսենի : ) Արի այստեղ , ի՞նչ ասաց այդ տղան :

Արտաւէ . (Մուայ) Ներողամիտ եղիք , Հըրանար յարտնի է իւր կոպտութեամբ :

Սենեերիմ . Ասա , հայր կոպտութիւնով ինձ չես կարող զարմացնել : Նրա ասածների միտքն է գլխաւորը : Ասա , նա քո ընկերն է :

Արտաւէ . Այս :

Սենեերիմ . Դու համաձայն ես նրա ասածների հետ :

Արտաւէ . (Կամսենալով նեռանալ) Այդ մասին յետոյ , գնանք զեռ ճաշելու :

Սենեերիմ . Ո՞չ , ո՞չ , ես չէմ կարող ճաշի նստեղ մինչեւ որ չիմանամ ո՞վ ես դու , ո՞վքը են քո ընկերները :

Արտաւէ . (Հաստաց) Իմ ընկերները , հայրիկ ,

իմ գաղափարակիցներն են : Ես ուրիշ ընկեր-ներ չեմ ճանաչում :

Սինեներիմ . Բայց այդ տղան այն չասաց , ինչո՞ր զու այստեղ , մի ժամ առաջ : Երբ դուների ծառից լսեցի քայլութ մօրդ հետ , երբ ականջիս հասան քո կրակոտ խօսքերը , յա- փշտակուեցի : ուզում էի յարձակուել քեզ վրայ , գրկել . համբուրել : Դու անցար քո սենեկը եւ ես ասացի . « ան իմ գաւակը . ան իմ իրական ժամանեց : »

Արաւեկ . Ինչի՞ մասին էին իմ խօսքերը , հայր :

Սինեներիմ . Մեր զի՞ս զործի մասին . այդ-պէս չէ :

Արաւեկ . Զեր զի՞ս զործը մերը չէ , իսկ մեր զործով զու չես կարող յափշտակուել :

Սինեներիմ . Ուրեմն , մենք ովքե՞ր ենք , զու եւ ես :

Արաւեկ . (Սառը) Դու եւ ես , հայր , բո- լորովին տարբեր աստուածներ ենք պաշտօւմ :

Սինեներիմ . (Բռնելով որդու օձիքը) Հայ ես զու . թէ չէ . . .

Արաւեկ . Ես ազգութիւն չեմ ընդունում :

Սինեներիմ . (Բաց բռնելով Արաւեկի օձիքը , ձեռը յենում է արողի սկզբին եւ բարձ ու դողդուն այսնով ) Անձուրիւմ զու :

Բոլոր . (Բնեմի խորից ապած հայում են :)

Ա. Ա. Ր. Ա. Դ. Ռ

(Ալլագանունիոն)

## Ե Ր Ա Ջ

Առաջօտ եր . լուսամուտին փակ փեղկէն Կը սպառէմ մոք սենեկին մէջ արեն Եր ասկրնծայ Ասոյներն . Եր ա՞մ ժաման Այ կը սօրդ հունք թիքրէ՞ւ աւելի՞ Թերեւ ու Խաղըր , կանցնեցաւ բակու մօս Ու նայեցաւ երես բասուրք անո՞ւ Ու ինչի նա՞յ առաջին սեր առելուն , Ու զիս բորոց արցունեցաւ մէջ իսու : Խօն մեռ մեռ կը կրցնէ . այսօն փողոն Կանեայի իմանայ զայն , եւ զուլս մէջ Քայլին Ժապին մօլոցներէն զայի . Ե՞մ Երիսաւար . բայց կը սպառ կը կորուի Երիսաւար հասակ հանգըն ծերութեան . Կը զարութիւն ծերութեան , եւ առկայ Ան ենու . Ես այս . բայց իմ ճաղին կեանս Անչ օսա իմ կը սարբերի : Ենա՞ն , բայց Երկանին այ արտասունի . Այս կեանին Զքրիպտան Երշանկորինն , ու Երկինն Հետազար մեր ասպապներով : Ար եր Ես , բայցի , այս արցունիք ու դէմա այ Ես զարուկու ոօցեր մահաւարդ համար , Ու իմ կրցն կրասի պիտ մ՞ , բու՞ ինձ , Միոյ եւ կամ զարք ինջոնք մը կանցար . Հանդէյ քրուտա սիրանարիզ : Այս ատեն Կանցընիք ես զիեւներս ու օւեր

Մեր մասին : Ե՞նչպէս եւ ուրեմն կրւզան , ո՞վ Գեղեցիքին սիրուն , ոսի : Ո՞ն , ո՞ւսան , Ո՞ւրան լացի ենք ու կու լամ . Եւ չի Կառծեր որ զայն իմանայիր պիտի զուն , Եւ ա՞ս իմ զարու կը զործէր աւելի՝ Անմիիքար . բայց զուն պիտի բործու ու զիս Պարեաւա . Ես այս կը կախնամ . արդ ոտ ինձ . Ե՞նչ անցան ենք զիսէնկ . դուն այն արշէ՞նն են . Եւ ինչ բայն ենք կը պիտուցնետ ներխաչպէս : Կը ցաւ միաբար մուաօննն , բաւ նէ , Ու կըսաք են մեր զայն . Ես Անուան են , Ու կըսաք արդ այս ամիս կընէ՞ւ տասա զիս Վերին անցան : Ե լոր ասեց՝ զաւ մաննեն Կուուծու երեւէց : Նարեւակեց այս նէ . Մեռայ ճաղին հասակին մէջ , կեանին երբու և աւելի անց , ու սիրու չէ՞ զիս Ստուզան թէ զուրւ է մարդկային ամէն յօս : Հէմ մասացն պէտ չուին այս փագէրու , Հզայան զայն որ զինն ամէն ասանապէտ Պիտի պատէ . բայց անուին է մանէն երբ Երիսաւար հասակին մէջ կը հասի : Եւ ի զանձ հանկանապէրն այս յոյսին Ու սոյին ասի կը շիշանի : Անիո՞րդ է զիսան ինչ որ կը ճանձէ բբնուրինն Անփուներէն կեանին , ու այս աւելի՝ Կարձ կոյր զար համ թէ խակ զիուրինն : Ո՞ն , աւրաբաս , ո՞ն սիրեին , լուս կեցիր , Լրա՞ւ , րու ես . զի զուն ես խօսերով Կը զգքիսն սիրուր . մեռած եւ ուրեմն , Ո՞վ սիրանին իմ , ու ես ե՞մ կենանի Եւ զրուած էր Երկինն ու հա՞սի իրտիններէն Այս սիրատի , իմնեւագի , իմնեւա մարմին կրէ՞ւ , Ու մաս ամբազ իմ երկինի այս պասանն : Ո՞հ , ես անի՞ւ հայի՞ անաս ու կրկին Կը մատէմ թէ չես ապէրի զուն այլու՞ Հաւասալ չեմ կարող : Ո՞ն , ո՞ն , ինչ բայ է Այն որ մեն մաս կը կրցնէ . այսօն փողոն Կանեայի իմանայ զայն , եւ զուլս մէջ Քայլին Ժապին մօլոցներէն զայի . Ե՞մ Երիսաւար . բայց կը սպառ կը կորուի Երիսաւար հասակ հանգըն ծերութեան . Կը զարութիւն ծերութեան , ու Երկինն Հետազար մեր ասպապներով : Ար եր Ես , բայցի , այս արցունիք ու դէմա այ Ես զարուկու ոօցեր մահաւարդ համար , Ու իմ կրցն կրասի պիտ մ՞ , բու՞ ինձ , Միոյ եւ կամ զարք ինջոնք մը կանցար . Հանդէյ քրուտա սիրանարիզ : Այս ատեն Կանցընիք ես զիեւներս ու օւեր